ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 օգոստոսի 2025 թվականի N 766-Ա

ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 53/15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետերով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի և 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 34.2-րդ կետով, 35-կետի դ) ենթակետով և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Տաշիրի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 1055-Ն որոշումով և հաշվի առնելով ինքնակամ կառույցն իրականացրած Մարինե Սիլիկի Աղայանի համաձայնությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 02082025-06-0007 վկայական) ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Ս. Շահումյան փողոց, թիվ 53/15 հասցեում գտնվող շինությունը՝ 21.8 քմ մակերեսով ավտոտնակը և դրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.00248 հա մակերեսով հողամասը ուղղակի վաճառքով օտարել ինքնակամ կառույցն իրականացրած Մարինե Սիլիկի Աղայանին:

2. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկներով՝
1) շինության 1 քառակուսի մետրի համար՝ 1028 (մեկ հազար քսանութ) դրամ (տարածագնահատման 15-րդ գոտի, կիրառված գործակիցը՝0,1028).
2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 792 (յոթ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ

3. Մարինե Սիլիկի Աղայանը պարտավոր է Տաշիր համայնքի բյուջե վճարել՝
1) համայնքապետարանի 900275081090 հաշվեհամարին՝ 22411 (քսաներկու հազար չորս հարյուր տասնմեկ) ՀՀ դրամ՝ շինության գինը.
2) համայնքապետարանի 900275081280 հաշվեհամարին՝ 19642 (տասնինը հազար վեց հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ՝ հողամասի գինը.

4. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է կառույցն իրականացրած Մարինե Սիլիկի Աղայանի կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. օգոստոսի 05

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 օգոստոսի 2025 թվականի N 767-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 53/16 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետերով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի և 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 34.2-րդ կետով, 35-կետի դ) ենթակետով և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Տաշիրի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 1055-Ն որոշումով և հաշվի առնելով ինքնակամ կառույցն իրականացրած Սմբատ Սարգսի Խաչատրյանի համաձայնությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնքային սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 01082025-06-0039 վկայական) ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Ս. Շահումյան փողոց, թիվ 53/16 հասցեում գտնվող շինությունը՝ 21.2 քմ մակերեսով ավտոտնակը և դրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.00241 հա մակերեսով հողամասը ուղղակի վաճառքով օտարել ինքնակամ կառույցն իրականացրած Սմբատ Սարգսի Խաչատրյանին:

2. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկներով՝
1) շինության 1 քառակուսի մետրի համար՝ 1028 (մեկ հազար քսանութ) դրամ (տարածագնահատման 15-րդ գոտի, կիրառված գործակիցը՝0,1028).
2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 792 (յոթ հարյուր իննսուներկու) << դրամ

3. Սմբատ Սարգսի Խաչատրյանը պարտավոր է Տաշիր համայնքի բյուջե վճարել՝
1) համայնքապետարանի 900275081090 հաշվեհամարին՝ 21794 (քսանմեկ հազար յոթ հարյուր ինսունչորս) << դրամ՝ շինության գինը.
2) համայնքապետարանի 900275081280 հաշվեհամարին՝ 19088 (տասնինը հազար ութանասունութ) << դրամ՝ հողամասի գինը.

4. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է կառույցն իրականացրած Սմբատ Սարգսի Խաչատրյանի կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. օգոստոսի 05

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 օգոստոսի 2025 թվականի N 768-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշումով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 33-րդ, 34.2-րդ և 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի 14-Ն որոշումով և հիմք ընդունելով «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը, կադաստրի կոմիտեում հաշվառված թիվ 2023WPWPHN ծածկագիրը, և այն, որ Տաշիր համայնք, քաղաք Տաշիր Դպրոցականների փողոց, 8/3 հասցեում կառույցի (կառույցների) պահպանման և սպասարկման համար 0.00344 հա մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում և կառուցված է 1986 թվականին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լոռու մարզի Տաշիր համայնք, քաղաք Տաշիր Դպրոցականների փողոց, 8/3 հասցեում կառույցի (կառույցների) պահպանման և սպասարկման համար 0.00344 հա մակերեսով հողամասի վրա քաղաքացի Նվարդ Սուրենի Գրիգորյանի կողմից ինքնակամ կառուցված 27.4 քմ մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչել համայնքային սեփականության իրավունքը:

2. Համայնքային սեփականություն հանդիսացող 27.4 քմ մակերեսով ավտոտնակը համարել օրինական՝ համաձայն ներկայացվող շինությունների հատակագծի և բնութագրի:

3. Հողամասի սահմանները որոշվում են «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված և Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Նվարդ Սուրենի Գրիգորյանին առաջարկել, օրինականացված կառույցը և կից հողամասը պետական գրանցում ստանալուց հետո, ուղղակի վաճառքի կարգով գնել գործող տուրքի և հողամասի կադաստրային արժեքի չափով՝
1) Հողամասի համար՝ 27245 (քսանյոթ հազար երկու հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ,
2) Ավտոտնակ՝ 28168 (քսանութ հազար հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ:

5. Սույն որոշումից ծագող իրավական հարաբերությունները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության Կադաստրի Կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. օգոստոսի 05

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 օգոստոսի 2025 թվականի N 769-Ա

«ԱՐՄԵՆ ԹՈՒՆՅԱՆ ԲԱՐԻՍԻ» ԱՁ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կողմից 2025 թվականի հուլիսի 08-ին հայտարարված «ՀՀ ԼՄՏՀ-ԳՀԱՊՁԲ-25/57» ծածկագրով ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի կարիքների համար շչակների ձեռքբերման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արմեն Թունյան Բարիսի» ԱՁ-ն, որը պատկանում է Արմեն Բարիսի Թունյանի :

ՀՀ պետական վերահսկողական ծառայության 30.07.2025-ի N Ե/1657-25 գրության համաձայն՝ ծառայությանը հասանելի տեղեկատվական համակարգում,տվյալների շտեմարանում և տեղեկագրում առկա տեղեկատվության վերլուծության արդյունքում,պարզվել է, որ առկա է փոխկապակցվածություն «Արմեն Թունյան Բարիսի» ԱՁ-ի և «Արմենգրուպ» ՍՊ ընկերության միջև Արմեն Բարիսի Թունյանը հանդիսանում է «Արմենգրուպ» ՍՊԸ-ի տնօրենը և հիմնադիրը:

«Արմենգրուպ»ՍՊԸ-ն 2024 թվականի մայիսի 21-ից մինչև 2026 թվականի մայիսի 21-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ ... գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք,որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017-ի N 526-Ն որոշման 119-րդ կետի 2-րդ ենթակետի՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝

1) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ

ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ուն

Ղեկավարվելով «Գնումների մասին »ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Արմեն Թունյան Բարիսի» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. ՀՀ Ֆինանսների նախարարություն ներկայացնել Արմեն Թունյան Բարիսի» ԱՁ-ի տվյալները՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. օգոստոսի 05

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 օգոստոսի 2025 թվականի N 770-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ ՏԱՇԻՐ ԳՏՆՎՈՂ 06-008-0085-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Համլետ Սպիրիդոնի Խոռյանի (անձնագիր՝ AV0581967, տրված 05.01.2023թ.) դիմումը (մուտք՝ 12/05/2025, ՔԴ-451-25), 17.12.1966 թվականին կազմված գույքային թերթը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի (գրանցամատյան՝ 1444) վկայագիրը, «ՄԵԼ ԵՎ ՄԻԼ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, նկատի ունենալով, որ բնակելի տան կառուցման համար օրինական հատկացված 0,05574 հա բնակելի կառուցապատման հողամասը և որ բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ և այն որ շինությունները կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը՝ 1958-1965թթ-ին

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրենքի ուժով ճանաչել Համլետ Սպիրիդոնի Խոռյանի սեփականության իրավունքը, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 06-008-0085-0007 կադաստրային ծածկագրում գտնվող 0,05574 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համաձայն «ՄԵԼ ԵՎ ՄԻԼ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:

3. Օրենքի ուժով ճանաչել Համլետ Սպիրիդոնի Խոռյանի սեփականության իրավունքը, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, 06-008-0085-0007 կադաստրային ծածկագրում

գտնվող 0,05574 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բոլոր շինությունների նկատմամբ:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Կադաստրի Կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2025թ. օգոստոսի 06

ք.Տաշիր